Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

16 (1415) • 3 մայիսի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

02 Ճակատամարտ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am



# Աշխատանքային խորհրդակցություն

Ապրիլի 27-ին ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանն աշխատանքային խորհրդակցություն անցկացրեց: Մասնակցում էին ոստիկանության պետի տեղակալները, ստորաբաժանումների ղեկավարներ եւ հանցավորության դեմ պայքարում աչքի ընկած ծառայողներ: Ոստիկանության պետը նախ վերլուծեց հանրապետության օպերատիվ իրավիճակը, առանձնահատուկ անդրադարձավ մարդու կյանքի, առողջության, ինչպես եւ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման միջոցառումներին: Այս համատեքստում Վալերիյ Օսիպյանը կոնկրետ ցուցումներ եւ հանձնարարականներ տվեց ստորաբաժանումների ղեկավարներին՝ փաստելով, որ հանցագործությունների օպերատիվ բացահայտումը հասարակություն-ոստիկանություն կապի ամրապնդման լավագույն միջոցներից է: Վալերիյ Օսիպյանն անդրադարձավ նաեւ հանցագործությունների բացահայտման համար լրացուցիչ պարգեւավճարների նոր որդեգրված քաղաքականությանը՝ հատուկ շեշտելով, որ սա եզակի եւ աննախադեպ մոտեցում է: «Մենք պատրաստ ենք առանց սահմանափակման լրացուցիչ պարգեւավճարներ հանձնել ծանր, առանձնապես ծանր, ինչպես եւ հասարակական հնչողություն ստացած հանցագործությունները բացահայտած ծառայողներին»,- նշեց Վալերիյ Օսիպյանը: Ոստիկանության պետը փաստեց, որ հանցագործություններ բացահայտող ոստիկանները, բացի իրենց հասանելիք աշխատավարձից, մշտապես կպարգեւատրվեն լրացուցիչ խոշոր գումարներով, որոնք որոշ դեպքերում մի քանի անգամ կգերազանցեն աշխատավարձի չափը, ուստի այս իրավիճակում առնվազն անընդունելի, անհասկանալի եւ անհանդուրժելի է ոստիկանի կողմից հակաօրինական ճանապարհներով գումար ձեռք բերելու ցանկացած դրսեւորում:




Խորհրդակցության ավարտին ծանր, առանձնապես ծանր հանցագործություններ բացահայտած, ինչպես եւ կյանքեր փրկած ոստիկաններն արժանացան դրամական պարգեւների:

Պարգեւատրվածների թվում կային մի քանի հարյուր հազար դրամ պարգեւի արժանացած ոստիկաններ: Վալերիյ Օսիպյանը շնորհավորեց ու շնորհակալություն հայտնեց բոլորին սրտացավ աշխատանքի համար՝ շեշտելով, որ հպարտանում է բարեխիղճ ծառայողներով:

# Հանդիպում ոստիկանությունում



Ապրիլի 29-ին ոստիկանության պետի առաջին տեղակալ Արման Սարգսյանն ընդունեց Ղազախստանի Հանրապետության ՆԳ նախարարի առաջին տեղակալ Մարատ Կոժաեւին եւ վարչական ոստիկանության կոմիտեի նախագահի տեղակալ Ալիբեկ Կենիսպաեւին:

Հանդիպման ընթացքում կողմերը դրական գնահատեցին հայ եւ ղազախ իրավապահների համագործակցության մակարդակը, դիտարկեցին գործընկերության խորացման հնարավորությունները համատեղ հետաքրքրություն ներկայացնող մի շարք ոլորտներում եւ երկուստեք հավանություն տվեցին այդ ուղղություններով գործընկերությունն ընդլայնելու առարկայական հեռանկարներին:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Հայաստանի ոստիկանության եւ Ղազախստանի ՆԳ նախարարության փոխգործակցության դաշտում գտնվող այլ հարցեր եւս:

# Արժանի մրցանակ

Օրերս Մոսկվայում անցկացվեց դետեկտիվ ֆիլմերի եւ իրավապահ մարմինների գործունեությանը նվիրված հեռուստահաղորդումների «Դետեկտիվֆեստ» միջազգային 21-րդ փառատոնը:

Հեղինակավոր փառատոնին ներկայացված էր շուրջ յոթ տասնյակ երկիր՝ հազարից ավելի աշխատանքներով: Հայաստանը ներկայացնում էր ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչությունը, որի ներկայացրած տեսաֆիլմերը տեղ էին գտել «Կեղտոտ փողեր», «Ոճիր եւ պատիժ» եւ «Աշխարհն առանց թմրանյութերի» անվանակարգերում:




Մի քանի օր տեւած քննարկումների արդյունքում միջազգային փառատոնի ժյուրին որոշեց հաղթողներին: Վարչության ներկայացրած «Ինքնիրավչություն» տեսաֆիլմը հաղթող ճանաչվեց «Կեղտոտ փողեր» անվանակարգում:

Մրցանակը ստացավ ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության պետ, ոստիկանության գնդապետ Աշոտ Ահարոնյանը:

Տարբեր անվանակարգերում հաղթող ճանաչվեցին եւ դիպլոմների արժանացան նաեւ Մեծ Բրիտանիայի, Շրի Լանկայի, Ռուսաստանի, Իրանի, Հնդկաստանի, Ճապոնիայի, Ֆինլանդիայի, Հունգարիայի ներկայացուցիչները:

# Սպանությունը բացահայտվեց թարմ հետքերով



Մայիսի լույս 1-ի գիշերը ոստիկանության Շենգավիթի բաժնում հիվանդանոցից հաղորդում ստացվեց, որ իրենց մոտ են տեղափոխվել դանակահարված երկու տղամարդ: Օպերատիվ խումբը պարզեց նրանց ինքնությունը. Երեւանի բնակիչներ՝ 32-ամյա Գուրգեն եւ 30-ամյա Գեւորգ Գրիգորյաններն էին: Եղբայրներից կրտսերը, գիտակցության չգալով, հիվանդանոցում մահացավ:

Հանցագործության բացահայտմանը միացան ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր եւ Երեւան քաղաքի վարչությունների, ինչպես եւ ՊՊԳՎ ծառայողները:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում սպանությունը բացահայտվեց:

Դեպքը տեղի էր ունեցել մայրաքաղաքի Շահամիրյանների փողոցում: Ոստիկանները պարզեցին կասկածյալի ինքնությունը. նա բերման ենթարկվեց ոստիկանության Շենգավիթի բաժին:

Կատարվում է նախաքննություն:

# Դանակահարություն Ծարավ Աղբյուրի փողոցում




Ապրիլի 20-ին, ժամը 22.05-ին, հիվանդանոցից ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին հաղորդում ստացվեց, որ կրծքավանդակի ձախ կեսի կտրած-ծակած վերքով բուժօգնության է տեղափոխվել 64-ամյա տղամարդ: Րոպեներ անց ստացվեց երկրորդ հաղորդումը՝ կրծքավանդակի կտրած-ծակած վերքով բուժօգնության է տեղափոխվել 40-ամյա տղամարդ: Տղամարդիկ հիվանդանոցում հայտնել էին, որ Ծարավ Աղբյուրի փողոցի տներից մեկի բակում անհայտ անձի կողմից դանակահարվել են:

Ըստ բժշկի տեղեկանքի՝ նրանք ի վիճակի չեն բացատրություն տալու:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ ոստիկանները պարզել են դանակահարողի ինքնությունը:

Դեպքի հանգամանքները պարզվում են:

# Հետախուզվում էր խարդախության համար



Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության օպերատիվ խմբի կողմից Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռով ապրիլի 10-ին Հայաստան տեղափոխվեց 2013 թվականից հետախուզման մեջ գտնվող Մարիամ Զաքարյանը: 63-ամյա կինը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի մեղադրանքով, այն է՝ խարդախությունը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով:

Մարիամ Զաքարյանը ներկայացվել է վարույթն իրականացնող նախաքննական մարմնին:

Հանցագործություն կատարած անձի գտնվելու վայրն անհայտ լինելու հիմքով կասեցված քրեական գործի վարույթը վերսկսվել է:

էջ 6

## Ավազակություն դեղատանը



*Մտել էր դեղատուն, դանակի սպառնալիքով հափշտակել փող, հեռախոս, մատանի, դեղորայք ու փախել:*

էջ 3

## Հետախուզվում էր խարդախության համար



*Խարդախը որոշեց ուրիշի նեղ վիճակից օգուտ քաղելու առիթը ձեռքից բաց չթողնել:*

էջ 6

## Կասեցված վարույթը վերսկսվել է



*Կասկածները, առաջ քաշվող վարկածները կա՛մ չէին հաստատվում, կա՛մ տանում էին փակուղի:*

էջ 7

# Հետախուզվում էին խարդախության համար

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողները, համագործակցելով օպերատիվ այլ ծառայությունների աշխատակիցների հետ, ապրիլի 25-ին հայտնաբերեցին հետախուզվող ամուսինների: Նրանք հայտնաբերվեցին Երեւան-Սեւան ճանապարհին՝ Վերին Պտղնի գյուղում: 61-ամյա Ասատուր ու 60-ամյա Կարինե Կարապետյանները բերման ենթարկվեցին ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն:

Կարինե Կարապետյանը փետրվարի 25-ից ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից հետախուզվում էր խոշոր չափերի խարդախության մեղադրանքով: Ամուսնու՝ Ասատուր Կարապետյանի մեղադրանքն էլ էր նույնը. այս դեպքում՝ խարդախությունն առանձնապես խոշոր չափերով է: Նա հետախուզվում էր ոստիկանության Էրեբունու բաժնի կողմից:

Ասատուր Կարապետյանը հետախուզվում էր 2016 թվականի մարտից: Ըստ առաջադրված մեղադրանքների՝ Ասատուր



Կարապետյանը 2014-2015 թթ. չորս տղամարդուց վերցրել էր 36 միլիոն 500 դոլար՝ իբր նրանց որդիներին պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ վաղաժամկետ պահեստազոր զորացրելու համար: Այդ անձանց օգտին որեւէ գործողություն չէր կատարել՝ չվերադարձնելով վերցրած փողը: 2015-ի հունիսին նույն խոստումներով 2 միլիոն դրամ էր վերցրել Արտաշատում ապրող մի տղամարդուց՝ խարդախությամբ հափշտակելով փողը: Դարձյալ 2015-ին մի տղամարդու հավաստիացրել էր, որ կկարգավորի նրա բանկային հարցերը եւ վերցրել էր 2 միլիոն 500 հազար դրամ՝ խաբեությամբ հափշտակելով փողը: Աշտարակում ապրող մի կնոջից էլ խաբեությամբ հափշտակել էր 2350 դոլար՝ որդուն աշխատանքի տեղավորելու խոստումներ տալով: 2017 թ. հունվարին էլ մի տղամարդուց 1 միլիոն 800 հազար դրամ էր վերցրել արտերկրից մեքենա բերելու պատրվակով: Բոլոր դեպքերում Ասատուր Կարապետյանը ներկայացել էր այլ անվամբ:

Դեպքերի հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

# Կաշառք նպաստառուից



Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության ծառայողները Լոռու մարզային վարչության եւ Տարոնի բաժնի գործընկերների հետ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում տվյալներ էին ստացել, որ Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի առանձնացված ստորաբաժանման սոցիալական ծառայությունների Վանաձորի տարածքային բաժնի մասնագետներից մեկը քաղաքացուց կաշառք է պահանջել: Ոստիկանության ծառայողները, օպերատիվ տվյալներն իրացնելով, Վանաձորի Տիգրան Մեծի փողոցից քաղաքացուց 28 հազար դրամ կաշառքը ստանալուց անմիջապես հետո սոցիալական ծառայության մասնագետին կասկածանքով բերման ենթարկեցին ոստիկանության Տարոնի բաժին: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին հատուկ գունանյութով մշակված թղթադրամները:

Հետագա միջոցառումներով ոստիկանները պարզել են, որ բերման ենթարկվածն այդ քաղաքացուն նպաստառուների ցուցակում ընդգրկելու եւ հաջորդող տարիներին նպաստի վճարը չդադարեցնելու, նպաստների տրամադրման գործընթացն առանց խոչընդոտների իրականացնելու, ընտանիքի բարեկեցիկ կենցաղավարության հանգամանքը չարձանագրելու, ինչպես եւ ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող այլ պայմանների վերացման փաստը թաքցնելու դիմաց պահանջել էր նպաստի մեկ կամ երկու ամսվա գումարը: Այսպիսով, 2016-ից 2019 թ. ապրիլի 23-ը պահանջել եւ ստացել է 112 հազար դրամ:

Փաստի առթիվ քրեական գործ է հարուցվել:

# Կողոպուտ՝ երեքամյա վաղեմության



Ոստիկանության Մաշտոցի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները օպերատիվ տվյալներ էին ստացել, որ երեք տարի առաջ Աջափնյակ վարչական շրջանի Շիրազի փողոցում կողոպուտ է կատարվել: Տուժողը ոստիկանություն չէր դիմել:

Տվյալների մշակման, վերլուծության եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ոստիկանները պարզեցին կողոպուտը կատարելու մեջ կասկածվող անձի ինքնությունը, որը ապրիլի 27-ին հայտնաբերվեց:

Խոսքը Կոտայքի մարզի Պռոշյան գյուղի բնակիչ Արթուր Միքայելյանի մասին է: Նա հայտնաբերվեց իր տանը եւ կասկածանքով բերման ենթարկվեց ոստիկանության Մաշտոցի բաժին:

Նախնական տվյալներով՝ Արթուր Միքայելյանը 2016 թ. գարնանը Շիրազի փողոցում նստել էր տաքսի եւ պատվիրել ուղեւորվել մայրաքաղաքի Հաղթանակի 1-ին փողոց: Պատվիրած վայրը հասնելուց հետո Միքայելյանը պոկել էր վարորդի պարանոցի ոսկյա շղթան, մատից հանել էր մատանին ու փախել: Տուժողին պատճառվել էր մոտ կես միլիոն դրամի վնաս:

Կատարվում է քննություն:

# Խաբեություն զբոսայգում



Օրերս ոսփիկանություն դիմած 22-ամյա երիփասարդը հայփնում էր, որ խաբեության զոհ է դարձել: Ավելի հսփակ՝ զբոսայգում իրեն է մոփեցել Կարեն ներկայացած մեկը եւ փող խնդրել՝ քիչ անց վերադարձնելու պայմանով: Ինքը նրան է փվել 31 հազար դրամ, ինչից հեփո Կարեն ներկայացածը հեռացել է՝ փողը չվերադարձնելով:

Դեպքի առթիվ ոսփիկանության Կենփրոնական բաժնում քրեական գործ հարուցվեց: Պարզվեցին դեպքի որոշ հանգամանքներ: Տուժողը չէր ճանաչում երիփասարդին, որին փող էր փվել. ընդամենը մի քանի բառ էին փոխանակել, մփերմություն սփեղծել, իբր ընդհանուր ծանոթներ գփել, հեփո մի քանի րոպեով փող էր խնդրել:

Ոսփիկանության Կենփրոնական բաժնի քրեական հեփախույզները օրեր փեւած հեփեւողական աշխափանքի շնորհիվ նախ պարզեցին խարդախություն կափարելու մեջ կասկածվողի ինքնությունը, ապա հայփնաբերեցին 28-ամյա Սփյոպա Գալսփյանին:

Հեփագա միջոցառումների շնորհիվ բերման ենթարկվածը հայփնեց, որ նմանափիպ խարդախություններ էլի է արել:

Կափարվում է նախաքննություն:

# Թմրաշրջանառությունը բացահայտվեց

*Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները, համագործակցելով ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության եւ Մալաթիայի բաժինների գործընկերների հետ, մայրաքաղաքի Արգիշտիի փողոցում հայտնաբերեցին Սմբատ Աղաբաբյանին՝ թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով: Անձնական խուզարկությամբ Աղաբաբյանի մոտ հայտնաբերվեցին սուբուտեքսի հաբ ու ներարկիչներ:*

*Նույն օրը ոստիկանները հայտնաբերեցին ու, թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով, բերման ենթարկեցին Կարապետ Հակոբյանին: Նրա մեքենայի սրահում հայտնաբերվեց սուբուտեքսի կես հաբ:*



*Հետագա միջոցառումներով ոստիկանները պարզեցին, որ Կարապետ Հակոբյանը թմրամիջոցը ձեռք է բերել Վրեժ Ազիզյանից, որը հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության Մալաթիայի բաժին:*

*Քրեական գործ է հարուցվել:*

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# www.police.am

### Գողություն եկեղեցու գանձանակից

Ապրիլի 27-ին ոստիկանության Սեւանի բաժնի ծառայողները, գողություն կատարելու կասկածանքով, Սեւան քաղաքի Նաիրյան փողոցից բերման են ենթարկել 60-ամյա Մերուժան Մ.-ին:

Մերուժան Մ.-ն տվել է խոստովանական բացատրություն, որ 2014 թ. Գեղարքունյաց թեմի Ծաղկունք համայնքի եկեղեցում պահակ եւ մոմավաճառ աշխատելիս տարբեր օրերի, օգտվելով եկեղեցու գանձանակի բանալին իր մոտ լինելու հանգամանքից, գողացել է տարբեր չափի փող:

Նախապատրաստվում են նյութեր:

### Հետախուզվում էր սպանության համար

Ապրիլի 27-ին ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության օպերատիվ խմբի կողմից Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռով Հայաստան է տեղափոխվել 47-ամյա Մանվել Հ.-ն, որը 2017 թ. սեպտեմբերից ոստիկանության Էրեբունու բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 104 հոդվածի (սպանությունը) 2-րդ մասի 7-րդ եւ 10-րդ կետերի մեղադրանքով:

### Փորձել էին գողանալ տերմինալը

Ապրիլի 26-ի լուսադեմին ոստիկանության ՊՊԳՎ Վաղարշապատի պահպանության բաժնի ծառայողները ծառայության ընթացքում նկատել են, որ Էջմիածին քաղաքի Մաշտոցի փողոցի բուքմեյքերական ընկերության վճարային տերմինալը փորձում են գողանալ: Ոստիկաններին հաջողվել է կանխել գողությունը. հանցագործները ավտոմեքենան թողնելով՝ դիմել են փախուստի:

Ոստիկանության Վաղարշապատի բաժնի եւ ՊՊԳՎ Վաղարշապատի պահպանության բաժնի ծառայողների որոնողական աշխատանքների արդյունքում դեպքի վայրի հարակից տարածքից, գողության փորձ կատարելու կասկածանքով, բերման է ենթարկվել 27-ամյա Աշոտ Խ.-ն, որը խոստովանել է, որ գողության փորձը կատարել է ինքը:

Ոստիկանության ծառայողները պարզել են, որ Աշոտ Խ.-ի հետ գողության փորձը կատարել է 27-ամյա Գեղամ Մ.-ն, որը նույնպես բերման է ենթարկվել եւ տվել խոստովանական ցուցմունք:

Նախապատրաստվում են նյութեր:

### Գողություն Ձառիթափ գյուղում

Հունվարի 9-ի գիշերը Ձառիթափ գյուղում տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էին խանութի դուռը եւ հափշտակել տարբեր ապրանքներ: Ոստիկանության Վայքի բաժնի ծառայողների եւ քննչական մարմինների համատեղ միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ մոտ չորս ամիս առաջ գողությունը կատարել է Երեւանի բնակիչ Արման Տ-ն:

Կատարվում է նախաքննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# «Ես մոլորված մարդ եմ»

***Բնության հետ շփումն, ասում են, մարդու կենսունակությունն է բարձրացնում. բնությունը զորավոր ուժ ունի, նաեւ՝ իմաստուն խորհուրդ, եթե ականջալուր լինես: Բնության հետ շփվողներին, ուրեմն, պիտի երանի տալ: Բնությանը մոտիկ լինելը, սակայն, ի չարս անդրադարձավ Գեղարքունիքի մարզի բնակիչ Արամ Ղարիբյանի վրա: Նա բնությունից «ուժ» ստանում էր կանեփի միջոցով: Այդ բույսն էր հատկապես նրա «կենսասիրությունն» ավելացնում, ու բնության հետ շփվելու նպատակը հիմնականում կանեփի հերթական պաշարը տուն տանելն էր:***



Արամ Ղարիբյանը, որ խնամքին երեք անչափահաս երեխա ունի, ոչ միայն թմրամոլ է, այլեւ թմրամիջոց իրացնող: Այնպես որ, բնության գիրկ գնալը ոչ միայն սեփական կարիքները հոգալու համար էր: Նաեւ իր նմանների կարիքները բավարարելով` փող աշխատելու նպատակ էր հետապնդում:

Արամի «հաճախորդները» թաղեցի երկու երիտասարդներ են` Լեւոն Կարապետյանը եւ Գուրգեն Գրիգորյանը: Ի տարբերություն Արամի` երկուսն էլ ամուրի են ու խնամքին ոչ ոք չունեն:

Կանեփի հետ առաջին «հանդիպումը» Արամ Ղարիբյանն այսպես է նկարագրում: Սեպտեմբերի 1-ն էր. հաստիքների կրճատման պատճառով ազատվել էր աշխատանքից ու անտրամադիր էր: Մտքերի մեջ ընկած` քայլում էր Գավառի ուղղությամբ, երբ կամրջի մոտ կանեփի թուփ նկատեց: Կանեփը բալասանի տպավորություն թողեց` կոգտագործեր ու մի քիչ կցրվեր...

«Նյարդերը հանգստացնելու» հնարավորությունը բաց թողնելը անմտություն համարելով` քաղեց «կենարար» տերեւները, որ արդեն չոր ու պատրաստ էին օգտագործման համար: Տեղում նախ իր «ծառը ջրեց», հետո արդեն մտածեց նաեւ իրացնելու մասին. փաթեթավորեց, դրեց գրպանն ու շարունակեց ճանապարհը:

Պահանջարկը չուշացավ: Թաղեցի երիտասարդների «նյարդերն էլ հանգստացրեց», փողով, իհարկե, ու որոշեց «զարկ տալ» «կանեփի բիզնեսին»:

Վատ «գործ» չէր. ե՛ւ շահավետ էր, ե՛ւ «բուժիչ»: Հետո որոշեց ընդլայնել «գործը», ու գարնան գալուն պես հողամասում կանեփի համար տեղ հատկացրեց: Հիմա արդեն սար ու ձոր չէր ընկնի:

Բայց բախտը չբերեց. իրացնելով օպերատիվ տվյալները` քրեական հետախուզության աշխատակիցները «հյուրընկալվեցին» նրան եւ խուզարկությամբ հայտնաբերեցին տան ու հողամասի «բարիքները»:

Արամ Ղարիբյանը խոստովանական բացատրություն տվեց, նույնիսկ զղջաց արարքի համար: Ուշացած զղջում էր, ինչ խոսք, պատասխանատվությունից խուսափելու համար էլ` անօգուտ:

Փաստով քննություն է կատարվում:

...«Ես մոլորված մարդ եմ»` իրեն այսպես ներկայացրեց Սմբատ Մանուկյանը, երբ ապրիլի 16-ին կասկածանքով բերման ենթարկվեց ոստիկանության Արմավիրի բաժին:

Անկասկած, մոլորված են նրանք, ովքեր կյանքի վայելքը թմրամոլության մեջ են տեսնում: Նախկինում երկու անգամ դատապարտված Սմբատի համար (երկու դատվածությունն էլ թմրանյութի հետ է կապված) վայելել` նշանակում է թմրանյութով մշուշել ուղեղը եւ «երջանի՜կ-երջանիկ» թափառել երեւակայական դրախտում... Հենց «թափառելիս» էլ հայտնվեց ոստիկանների ճանապարհին: Թմրանյութով հանդերձ, թմրանյութ օգտագործած:

«Մոլորվածի» հարցերով նույնպես քննություն է կատարվում:

**Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

# Դանակահարությունը բացահայտվեց



Ապրիլի 22-ին «Էրեբունի» բժշկական կենտրոն տեղափոխվեց դանակահարված մի տղամարդ: Նոր Արեշում ապրող 37-ամյա տղամարդուն Օղանավակայանի փողոցից հիվանդանոց էր հասցրել «շտապօգնության» խումբը: Դանակահարվածն, ըստ բժշկի հայտարարության` ի վիճակի չէր բացատրություն տալու:

Ոստիկանության Շենգավիթի բաժնի Չարբախի բաժանմունքի քրեական հետախույզները ձեռնարկած տարաբնույթ միջոցառումների արդյունքում պարզեցին դեպքի հանգամանքները:

Օղանավակայանի փողոցում մի քանի հոգի վիճել էին, ինչի ընթացքում էլ տղամարդը դանակահարվել էր: Շուտով հայտնի դարձավ կասկածյալի ինքնությունը:

Ահազանգին արագ արձագանքելու եւ դեպքի վայրում իրականացրած ճշգրիտ գործողությունների շնորհիվ Չարբախի ոստիկանները կարճ ժամանակում հայտնաբերեցին Ամիրան Ֆարեյանին ու կասկածանքով բերման ենթարկեցին: 30-ամյա Ֆարեյանը ոստիկանությունում տվեց խոստովանական բացատրություն, ապա ներկայացվեց դեպքի նախաքննությունը վարող տարածքային քննչական բաժին:

Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվեց հանցագործության գործիք դանակը:

Դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել:

# Բռնվեցին դեպքի վայրում



Ապրիլի 6-17-ը Արաբկիր վարչական տարածքում գողության եւ գողության փորձի երեք դեպք գրանցվեց: Առաջին ահազանգը ոստիկանության Արաբկիրի բաժնում հնչեց ապրիլի 6-ին. տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էին Գյուլբենկյան փողոցի դեղատներից մեկի դուռն ու դրամարկղից փող հափշտակել:

Օպերատիվ խումբը մեկնեց դեպքի վայր: Տեսահսկող սարքերը ֆիքսել էին գողությունը: Արտաքին տվյալների մասին պատկերացում կազմելը, սակայն, դժվար էր: Երկուսն էլ դիմակով էին:

Գողությունը կատարած անձանց հայտնաբերելու ուղղությամբ քրեական հետախույզները որոնողական աշխատանքներ էին ձեռնարկում, երբ ապրիլի 17-ի լուսադեմին օպերատիվ կառավարման կենտրոնից գողության մասին նոր ահազանգ ստացվեց: Դարձյալ տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էին Կոմիտասի պողոտայի կոշիկի խանութի դուռը, դրամարկղից փող, վաճառասրահից` կանացի պայուսակ հափշտակել: Ամեն ինչ կատարվել էր հաշված րոպեների ընթացքում, եւ խանութի տեսահսկող սարքերից բացի նրանց ոչ ոք չէր «տեսել»:

Ոստիկանները դեռ խանութում էին, երբ գողության փորձի վերաբերյալ ահազանգ ստացվեց: Ժամը 5-ի սահմաններում փորձել էին բացել Թամանյան փողոցի խանութներից մեկի դուռը, բայց գործն ավարտին հասցնել չէին կարողացել:

Տեսագրությունների վերծանումը հուշում էր, որ նույն երիտասարդներն են: Որոնողական աշխատանքները շարունակվեցին: Այդ ընթացքում ստացված տեղեկությունների մշակման արդյունքում պարզվեց, որ նշված հանցագործությունները հնարավոր է կատարած լինեն Սարի թաղի բնակիչ Գոռ Հախվերդյանը եւ Գավառի բնակիչ Հայկ Գարգրցյանը:

Իրավապահները հետաքննության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները ստուգելու եւ հիմնավորելու ուղղությամբ միջոցառումներ էին ձեռնարկում, երբ տվյալներ ստացվեցին, որ կասկածյալները կրկին պատրաստվում են գողություն անել Արաբկիր վարչական տարածքի մի խանութից:

Քրեական հետախույզները ապրիլի 22-ի գիշերը, օպերատիվ տեղեկություններն իրացնելով, Կոմիտաս-Վրացական փողոցների խաչմերուկի մթերային խանութի դռան փականը կոտրելիս բռնեցին կասկածյալներին եւ, գողություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկեցին ոստիկանության Արաբկիրի բաժին:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ, նշվածներից զատ, կասկածյալներն ապրիլի 18-ին գողություններ են արել նաեւ Կենտրոն վարչական տարածքի մի մթերային խանութից ու տուրիստական գործակալությունից:

Նախաքննությունը շարունակվում է:

# Գողության փորձ Սպիտակում



Ապրիլի 23-ի առավոտյան ոստիկանության Սպիտակի բաժին ահազանգած փղամարդը հայտնում էր, որ հարեւանի տուն գող է մտել, որին բռնել են:

Ահազանգին արագ արձագանքած օպերատիվ խումբը դեպքի վայրից` Մյասնիկյան փողոցից, գողության փորձ կատարելու կասկածանքով, բերման ենթարկեց Սասուն Թոմոյանին: Ոստիկանությունում պարզվեց, որ Լոռու մարզի Լեռնապատ գյուղի բնակիչ Թոմոյանը օրեր առաջ էր ազատ արձակվել քրեակատարողական հիմնարկից: Նախկինում մի քանի անգամ դատապարտվել էր գողության, կողոպուտի, ավազակության եւ սպանության մեղադրանքներով:

Նախնական տվյալներով` Սասուն Թոմոյանը պարսպի վրայով մտել էր նշված տան բակ ու փորձել էր բացել դուռը կամ պատուհանը: Այդ ընթացքում ձայն էր լսել եւ պարսպի վրայով վերադարձել էր փողոց, որտեղ էլ հարեւանները բռնել էին նրան ու ահազանգել ոստիկանություն:

Տանտերը ոստիկանության Սպիտակի բաժնում հաղորդում է տվել: Քրեական գործ է հարուցվել:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# Ավազակություն դեղատանը



Ապրիլի 24-ին, կեսգիշերն անց, Տիգրան Մեծի պողոտայի դեղատներից մեկում ավազակային հարձակում էր կատարվել: Մի երիտասարդ էր մտել շուրջօրյա գործող դեղատուն, դանակի սպառնալիքով դրամարկղից հափշտակել էր փող, դեղատան աշխատողի դրամապանակը, բջջային հեռախոսը, մատանին, ցավազրկող դեղորայք ու փախել:

Դեպքից րոպեներ անց ոստիկանության Էրեբունու բաժնում օպերատիվ կառավարման կենտրոնից ահազանգ ստացվեց: Օպերատիվ խումբը մեկնեց Տիգրան Մեծի պողոտա:

Ըստ տուժողի` հարձակվողը բարձրահասակ էր, երիտասարդ: Դեմքը տեսնել չէր հաջողվել:

Քրեական հետախույզները վերծանեցին տեսախցիկների տեսագրությունները: Նա էր, ում նկարագրել էր տուժողը: Սակայն կասկածյալի միայն արտաքին նկարագիրը պարզելը բացահայտման համար քիչ էր, անհրաժեշտ էր ճշտել անձնական տվյալները, գտնվելու վայրը եւ, որ ամենակարեւորն էր, հայտնաբերել նրան:

Որոնողական աշխատանքները շարունակվեցին: Անհայտ անձի ինքնությունը պարզելու, նրան եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ ոստիկանները տարաբնույթ միջոցառումներ ձեռնարկեցին: Համայնքային ոստիկաններին ցուցում տրվեց զրուցել հարակից շենքերի բնակիչների հետ: Բացահայտման աշխատանքներին միացան ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախույզները: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում տեղեկություններ ստացվեցին, որ հանցագործությունը հնարավոր է կատարած լինի Նոր Արեշի բնակիչ Սամիկոն Առաքելյանը: Ապրիլի 24-ին նա հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց ոստիկանության Էրեբունու բաժին:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ:

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# «Համացանցային» առեւտուր



Գեղարքունիքի մարզի Լճավան գյուղի բնակիչ Սամիկոն Կարապետյանը սոցիալական կայքերից մեկում մատչելի գնով կահույքի վաճառքի հայտարարություն կարդաց եւ որոշեց գնել՝ կնոջը անակնկալ մատուցելու մտադրությամբ: Կայքում նշված հեռախոսահամարով զանգեց օգտատիրոջը՝ Վարդուհուն: Համաձայնության եկան, եւ նա Սամիկոնին հաշվեհամար տվեց, որպեսզի 35 հազար դրամ փոխանցեր, իսկ կահույքը կառաքեր հաջորդ օրը:

Սամիկոնը փոխանցումը կատարեց: Իսկ երբ զանգեց Վարդուհուն՝ պարզելու, թե որ ժամին են ուղարկելու կահույքը, Վարդուհին անտեղյակ ձեւացավ եւ անջատեց հեռախոսը: Սամիկոնը պարբերաբար զանգում էր նրան, բայց՝ ապարդյուն:

Կասկածելով, որ խաբված է, Սամիկոնը կնոջը հայտնեց «կահույքի ձեռքբերման» ոդիսականի մասին եւ խնդրեց զանգել Վարդուհուն ու կահույք պատվիրել:

Վարդուհին հերթական պատվերը սիրով ընդունեց: Դարձյալ ինքնավստահ տեղեկացրեց, որ կահույքը շուկայական գնից մատչելի է, հետո հաշվեհամարը տալով՝ հավաստիացրեց, որ փողը փոխանցելուց հետո այն կառաքեն: Սակայն Սամիկոնի կինը պնդեց, որ գնելուց առաջ պիտի տեսնի վաճառվող ապրանքը: Վարդուհուն համոզել չհաջողվեց: Արդեն պարզ էր, որ նա խաբել էր Սամիկոնին:

Կատարվածի մասին Սամիկոն Կարապետյանը հաղորդում տվեց ոստիկանության Վարդենիսի բաժնում: Ձեռնարկվում են միջոցառումներ Վարդուհի Սողոմոնյանին հայտնաբերելու ուղղությամբ:

Նախապատրաստված նյութերով կատարվում է քննություն:

# «Հարսանեկան»



Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի ռեստորանային համալիրում հարսանեկան խնջույք էր: Հավաքվել էին նորապսակների՝ Արմենի եւ Նարինեի հարազատները, ընկերները, հարեւանները՝ հավուր պատշաճի քեֆ անելու եւ երիտասարդ զույգին շնորհավորելու: Հաճելի մթնոլորտ էր. պարահրապարակը՝ մարդաշատ, կենացները՝ անսպառ: Որեւէ մեկի մտքով չէր անցնում, որ կարող է փհաճ միջադեպ լինել: Բայց եղավ...

Արմենի հարազատներից մեկը՝ Ռազմիկը, գնաց լվացվելու: Գինովցած էր եւ հավանաբար չէր նկատել, որ կանգնել է կանանց զուգարանի մոտ: Այդ ընթացքում նրան մոտեցավ խնամի Կարենը եւ դիտողություն արեց այդտեղ կանգնելու համար: Ռազմիկը վրդովվեց: Նրանց երկխոսությունը վերածվեց վեճի:

Ռազմիկը Կարենին հրավիրեց դուրս՝ իրեն դիտողություն անելու համար բացատրություն պահանջելու: Դրսում արդեն ծեծկռտուք սկսվեց, որին միջամտեցին փարածքում ծառայություն կատարող ոստիկանության Վարդենիսի բաժնի աշխատակիցները:

Ռազմիկ Հարությունյանը եւ Կարեն Վարդանյանը բերման ենթարկվեցին: Երկուսն էլ խախտել էին քրեական օրենսգրքի 117 հոդվածի պահանջները. իրար պատճառել էին թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով:

Բողոքների բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

**Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ**

# Ավանդույթն ընդդեմ հանցավորության

Իրողություն է, որ Հարավային Կորեայում գրեթե չեն հանդիպում փողոցային հանցավորության, բռնարարքների դեպքեր: Կորեական շատ սովորույթներ օտարերկրացիներին պարզապես զարմացնում են: Օրինակ, ընդունված է մեքենան կայանելիս ավտոկայանատեղիի վարչակազմի անդամ ներկայացածին հանձնել մեքենայի բանալիները:

Մեքենաների առեւանգումը Կորեայում, կարելի է ասել, բացակայում է: Վաճառողը կարող է խանութի դուռը բաց թողնել ու որոշ ժամանակով բացակայել. վաճառասեղանից ու ցուցափեղկերից ոչինչ չի անհետանա: Անգամ ճամպրուկներն ու պայուսակները կորեացիները կարող են ժամերով անուշադրության մատնել՝ վստահ, որ ոչ ոք ձեռք չի տա:

Մոտ տասնհինգ տարի առաջ կորեական թերթերից մեկը հետաքրքիր մի պատմություն էր հրապարակել մի գործավարուհու մասին:

Շինարարական մի ընկերություն գործավարուհուն ուղարկել էր վճարելու մատակարարի փողը՝ մոտ միլիարդ վոն (ավելի քան մեկ միլիոն դոլար): Գործավարուհին փողը դնում է պայուսակն ու գնում: Մետրոյի գնացքում պայուսակը դնում է վագոնի դարակներից մեկի վրա (Սեուլի մետրոյում կան հատուկ դարակներ, որոնց վրա կարելի է դնել պայուսակները), հանում գիրքն ու սկսում կարդալ: Տեղ հասնելով՝ իջնում է՝ պայուսակը մոռանալով դարակին: Երբ նկատում է, որ պայուսակը չկա, գնացքն արդեն շարժվել էր: Այդ մասին տեղեկացնում է ոստիկաններին: Հաջորդ



կանգառում ոստիկանները պայուսակը նույն տեղում էլ գտնում ու վերադարձնում են գործավարուհուն:

Մեկ այլ պատմություն:

Ֆիրմաներից մեկի աշխատակցին հանձնարարում են ծրարով փողը տանել ու մուտք անել բանկային հաշվին: Մեքենա նստելիս աշխատակիցը ծրարը դնում է մեքենայի վրա ու շարժվում: Կորած փողը գտնում է տեղի կոմբինատի բանվորներից մեկը: Քանի որ ծրարի վրա կնիք կար, ֆիրման գտնելը դժվար չէր: Հենց նույն օրը ծրարով փողը հանձնում է ֆիրմայի հաշվապահություն:

Նման դեպքերը Հարավային Կորեայում սովորական են, եւ ոչ ոքի չեն զարմացնում:

Հարավային Կորեայում 100 հազար բնակչին տարեկան բաժին է ընկնում 2,6 սպանություն: Հրազենով կատարված սպանությունները 100 բնակչի հաշվարկով՝ 0,04 տոկոս է: Սա նշանակում է, որ հրազենով կատարված սպանությունները տարեկան չեն գերազանցում քսանը:

Ուշագրավ է, որ այս երկրում երբեք չեն օգտվում օտարերկրացիների անփորձությունից: Պատկերացնո՞ւմ եք մի երկիր, որտեղ փողոցներում չկան կամ գրեթե չկան ոստիկաններ. չնայած՝ 100 հազար բնակչին բաժին է հասնում 200 ոստիկան:

Ասել, որ կորեացիները, առանց բացառության, օրինապաշտ են, չի կարելի: Խարդախություններն ու ֆինանսական բուրգերը հայտնի են նաեւ Կորեայում: «Ատկատները», փողերի փոշիացումն ու պետական բյուջե թափանցելու այլեւայլ փորձերը կորեական բիզնեսում էլ տարածված են: Տաբուներ գոյություն ունեն, ըստ էության, փողոցային եւ բռնությամբ ուղեկցվող հանցատեսակների դեպքում:

Հարավային Կորեայի քաղաքացին իրեն պատասխանատու է զգում երկրի առաջ, իր պետության համար: Կորեան խիստ սոցիալական վերահսկողություն ունեցող պետություն է: Խոսքը ոչ թե պետական, այլ հասարակական վերահսկողության մասին է:

*Շարունակելի*

**Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ**

# Չվարժալի ամփոփագիր

## Խոստովանություն-ահազանգ

Ոստիկանություն է զանգել 27-ամյա մի երիտասարդ եւ հայտնել, որ ծեծել է ընկերուհուն:

Ոստիկանները բաժին են ներկայացրել նրան, որտեղ խոստովանական բացատրությամբ հայտնել է, որ վիճաբանության ժամանակ խփել է իր ընկերուհի Ալեսիայի դեմքին:



Ձեռնարկվում են միջոցառումներ՝ Ալեսիային հայտնաբերելու ուղղությամբ:

## Համաներված նախկինը

36-ամյա Նազիկը հաղորդում է տվել, որ նախկին ամուսինը՝ նախկինում դատված եւ համաներումով ազատված 38-ամյա Կարենը, ոգելից խմիչք օգտագործած վիճակում եկել է իր տուն, վիճաբանել, հայհոյել իրեն եւ ընտանիքի անդամներին ու կոտրել մուտքի դռան ապակին:

Ձեռնարկվում են միջոցառումներ Կարենին հայտնաբերելու ուղղությամբ:

Մինչ նոր համաներում...

## Ձապված ցանկություն

Կեսգիշերին ոստիկանություն է զանգել 57-ամյա մի զայրացած տղամարդ: Նա հայտնել է, որ ցանկանում է սպանել նախկին կնոջը:

Ոստիկանները շտապ մեկնել են նշված վայր, սակայն տղամարդու հերսն արդեն թողել էր. նա հրաժարվել է բացատրություն տալուց:

## Վնասված քթով

Քրեական հետախույզները ոստիկանություն են ներկայացրել 48-ամյա մի տղամարդու: Պարզվել էր, որ նա փողոցում հեռախոսով բարձր խոսելու համար դիտողություն է արել 20-ամյա մի երիտասարդի, եւ այդ հարցի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ երիտասարդը բռնցքահարել է՝ քթի շրջանում պատճառելով վնասվածք:

## Գողացված հեղափոխություն

Քրեական հետախույզները, գողություն կատարելու կասկածանքով, բերման են ենթարկել 56-ամյա մի տղամարդու, որի անձնական խուզարկությամբ հայտնաբերել են «Հայկական Թավշյա Հեղափոխություն» անվամբ չորս գիրք: Պարզվել է նաեւ, թե ո՛ր գրախանութից են գրքերը գողացվել:

Տղամարդը խոստովանել է, որ գրքերը հատ-հատ գողացել է տարբեր օրերի:

## Գազային հարձակում

Ոստիկանություն է զանգել 45-ամյա Վարդանը եւ հայտնել, թե հարեւանը հարձակվել է իր վրա:

Մեկնած ոստիկաններին նա հաղորդում է տվել, որ շենքի շքամուտքում, վիճաբանելիս, հարեւաններ Սիրակը, Կարենը եւ նրա հայրը ծեծել են իրեն:

Ավելի ուշ հիվանդանոցից ստացվել է ահազանգ. «անհայտ էթալոգիայի թունավորում եւ գազի թունավորում՝ հարցականով» ախտորոշմամբ բուժօգնության են տեղափոխվել վերոհիշյալ Կարենն ու մի կին:

Պարզվել է, որ նրանք թունավորումը ստացել են նշված վիճաբանության ժամանակ, երբ Վարդանը ինքնապաշտպանական գազային բալոնիկ է օգտագործել:

## Ցուտ գյուղական սպառնալիք

56-ամյա մի տղամարդ հաղորդում է տվել, որ իր տնամերձ հողամասի վերջնամասում 42-ամյա հարեւանը բահը ձեռքին փորձել է խփել իրեն, նաեւ սպառնացել է՝ թե բահով վիզը կկտրի:

Խոտհնձի օրերին հատկապես վտանգավոր կլինի...

## www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ ապրիլի 25-ից մայիսի 2-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 21 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր սպանության, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, 2-ը՝ ծեծի, 1-ը՝ ավազակության, 1-ը՝ կողոպուտի, 1-ը՝ գողության, 4-ը՝ խարդախության, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ պետական սահմանն ապօրինի հատելուն հանցակցելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 4 հետախուզվող:

Արձանագրվել է 75 ճանապարհատրանսպորտային պատահար. 3 մարդ զոհվել է, 117-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 12 դեպք. 1 մարդ զոհվել է, իսկ 11-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Հանրապետության ճանապարհներին

Ապրիլի 30-ին Երեւանի Անդրանիկի եւ Օհանովի փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Օպել» եւ «Նիսան» մակնիշի ավտոմեքենաներ. «Նիսան»-ի 27-ամյա վարորդը եւ երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Ապրիլի 30-ին Մարգարա-Վանաձոր-Տաշիր ճանապարհի 35-րդ կմ-ին իրար են բախվել «ՎԱԶ-2109» եւ «ՎԱԶ-2102» մակնիշի ավտոմեքենաներ. վարորդները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Ապրիլի 30-ին Երեւանի Մ. Մելքոնյան փողոցի եւ Իսակովի պողոտայի խաչմերուկում իրար են բախվել «Ֆոլքսվագեն», «Օպել» եւ «Հոնդա» մակնիշի ավտոմեքենաներ. «Հոնդա»-ի վարորդը եւ երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 1-ին «Օպել Վեկտրա» մակնիշի ավտոմեքենան Լոռու մարզի Լեռնանցք գյուղում դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ հայտնվել համայնքապետարանի բակում. մեքենան ինքնահրկիզվել է, իսկ 31-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 1-ին Երեւանի Սյասնիկյան պողոտայում իրար են բախվել «Մերսեդես» եւ «Հունդաի» մակնիշի ավտոմեքենաներ. վարորդները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 1-ին «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Վաղարշյան փողոցում վրաերթի է ենթարկել 68-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 1-ին Երեւանի Երեւանյան խճուղում իրար են բախվել «Շեվրոլե» եւ «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենաներ. «Տոյոտա»-ի վարորդը եւ 29-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 1-ին Արարատի մարզի Ազատավան գյուղում «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենան բախվել է «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի. «Նիսան»-ի 70-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 1-ին Էջմիածին-Մարգարա ճանապարհի 1-ին կմ-ին իրար են բախվել «ԳԱԶ-3110» եւ «Նիսան Մարչ» մակնիշի ավտոմեքենաներ. «ԳԱԶ-3110»-ի 39-ամյա ուղեւորը, «Նիսան Մարչ»-ի 43-ամյա վարորդը եւ երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 1-ին «ՎԱԶ-2104» մակնիշի ավտոմեքենան Արմավիր-Երեւան ճանապարհի 17-րդ կմ-ին դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ կողաշրջվել. 70-ամյա վարորդը եւ 66-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 1-ին Սեւան-Մարտունի-Գետափ ճանապարհի 55-րդ կմ-ին իրար են բախվել «Միցուբիշի Գրանդիս» եւ «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենաներ, այնուհետեւ «Միցուբիշի Գրանդիս»-ը բախվել է ծառին. «Միցուբիշի Գրանդիս»-ի երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում «Մերսեդես Բենց»-ի 52-ամյա վարորդը հայտնաբերվել է Երանոս գյուղում:

■

Մայիսի 1-ին «ԳԱԶ-322132-220» մակնիշի ավտոմեքենայի 63-ամյա վարորդը Վանաձորի Վարդանանց փողոցում վրաերթի է ենթարկել 4-ամյա տղայի եւ իր մեքենայով տեղափոխել հիվանդանոց:

■

Մայիսի 1-ին Երեւան-Աշտարակ ճանապարհի 7-րդ կմ-ին իրար են բախվել «Հոնդա Էլիսոն» եւ «Միցուբիշի Պաջերո» մակնիշի ավտոմեքենաներ. «Միցուբիշի Պաջերո»-ի վարորդը եւ 30-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

# Հայտնաբերվել է «չարության գոտին»



Բրեմենցի 70-ամյա պրոֆեսոր Գերհարդ Ռոտը գիտական հայտնագործություն է արել. բացահայտել է հանցագործության հակվածությունը որոշակի մարդկանց պաթոլոգիկ գլխուղեղում: Նյարդաբանը գլխի ճակատային մասում առանձնացրել է հատուկ գոտի, որտեղ ձեւավորվում է բռնության «ցանկությունը»: Նրա կարծիքով՝ ուղեղի նման պրոցեսներն ի հայտ են գալիս ոչ միայն սերիական մարդասպանների մոտ, այլեւ այնպիսի դիկտատորների՝ ինչպիսիք են Ադոլֆ Հիտլերը, Իոսիֆ Ստալինը եւ Մաո Ցզեդունը: Պրոֆեսորի եզրակացությունները հիմնված են դատապարտված հանցագործների եւ կրկնահանցագործների ուղեղում կատարվող պրոցեսների հետազոտությունների վրա: Ռոտը նրանց ցուցադրում էր բռնության նկարագրություններով տեսասկավառակներ՝ միաժամանակ որոշելով փորձարկվողի ուղեղի ակտիվությունը, գրում է Bild թերթը: Ռոտը հանցագործության հակվածության հետ է կապում նաեւ օրգանիզմում սերոտինի ոչ բավարար քանակը: «Ամեն դեպքում, ուղեղի հենց այդ հատվածում է ձեւավորվում եւ պահվում չարությունը,- եզրակացնում է գերմանացի գիտնականը,- երիտասարդների ուղեղի աշխատանքը ուսումնասիրելով՝ 66 տոկոսի հավանականությամբ հնարավոր է «հայտնաբերել» պոտենցիալ հանցագործին»: Այդուհանդերձ, պրոֆեսորը խոստովանում է, որ միայն կենսաբանական գործոնները չեն խթանում հանցագործ դառնալը, եւ նրանց բաժանում է երեք կատեգորիայի: Առաջին խմբում հոգեպես առողջ մարդիկ են, որոնք մեծացել են քրեական միջավայրում, որտեղ գողությունը, բռնությունը եւ սպանությունը սովորական բաներ են: Երկրորդ խմբում, այսպես կոչված՝ իմպուլսիվ կամ ռեակտիվ հանցագործներն են, որոնք շրջապատող աշխարհին ընկալում են որպես սպառնալիք եւ սթրեսի կամ աֆեկտի վիճակում կարող են սպանություն կատարել: Վերջապես երրորդ եւ ամենավտանգավոր՝ հանցագործ-փսիխոպաթների խումբը: «Դրանցից էին բռնակալներ Հիտլերը, Ստալինը եւ Մաոն,- ասում է պրոֆեսորը:- Այս հանցագործները հաճախ օժտված են գրավչությամբ եւ գեղեցիկ խոսելաոճով, տառապում են բարձրադաս գոռոզամտությամբ»:

Նյարդաբանը գտնում է, որ դեռեւս նախադպրոցական տարիքում հարկավոր է ուսումնասիրել երեխաների վարքագիծը եւ ուղեղի գործունեությունը՝ որոշելու հանցագործության հակվածության աստիճանը: Եվ եթե երեխան «ռիսկի խմբից» է, պետք է միջոցներ ձեռք առնել:

Նշենք, որ Գերհարդ Ռոտի նախկին եզրահանգումները վիճաբանությունների առիթ են դարձել գիտական աշխարհում: Օրինակ, քննադատվել է նրա այն եզրակացությունը, որ աղջիկները պակաս հակված են մաթեմատիկային ու երաժշտությանը, քան տղաները: Պրոֆեսորի ընդդիմախոսները հաստատում են, որ նա գռեհկացնում է «մաթեմատիկական տաղանդ» հասկացությունը՝ այն կապելով միայն աբստրակտ եւ տրամաբանորեն մտածելու ունակությանը:

Ըստ էության չկա որեւէ լուրջ վիճակագրություն, ինչը կհաստատի կամ կհերքի վիճելի թեզիսները: Ավելին՝ կան հակառակն ապացուցող օրինակներ. մաթեմատիկայի միջազգային օլիմպիադայի պատմության մեջ ամենափայլուն մասնակիցը Լիզա Ձաուէրմանն է՝ Դրեզդենից, որը նվաճել է չորս ոսկե եւ մեկ արծաթե մեդալ,- մեկ տարի առաջ գրել է Scilogs գիտական ամսագիրը:

Իրենց հերթին քրեաբանները նույնպես քննադատում են Գերհարդ Ռոտի «կենսաբանական դետերմինիզմը» եւ հանցագործության «ժառանգական նախատրամադրվածությունն» ապացուցելու նրա փորձը: Բացի այդ՝ գերմանական կառավարությունը վերջին տարիներին ֆինանսավորում է մի շարք գիտական հետազոտություններ, որոնց մասնակցում է նաեւ Գերհարդ Ռոտը: Գիտաշխատողները նախածին փուլում պոտենցիալ հանցագործներին հայտնաբերելու մեխանիզմ են մշակում:

# 1990-ականների մերձմոսկովյան ավազակախմբերը

**Սկիզբը՝ նախորդ համարում**

Գուսյատինսկու հետ հաշվեհարդար տեսնելուց հետո Պիլեւ եղբայրներին հայտնի դարձավ, որ Մեդվեդեւյան հանցախմբի գահը զբաղեցնելու համար քայլեր է ձեռնարկում Յուրի Բաչուրինը (Ուսատի), որը Լիանոզովյան ավազակախմբի պարագլուխն էր: Այդ հանցախումբը ժամանակին ենթարկվում էր Գրիշա Սեւերնուն: Ուսատին դաժան եւ ագահ անձնավորություն էր, սակայն չուներ Պիլեւ եղբայրների խորամանկությունը եւ հեռատեսությունը: Ամենուրեք հայտարարում էր իր նպատակների մասին, ուստի եղբայրները որոշում են նրանից ազատվել: Պիլեւ եղբայրները դիմում են Օրեխովյան հանցախմբի «հեղինակություն» Ալեքսեյ Սադովնիկովին (Բանչչիկ), որը Ուսատիին հրավիրում է շոգեբաղնիք: Հանդիպելու էին Սիրահարների օրը՝ 1995 թ. փետրվարի 14-ին, լինելու էին նաեւ թեթեւաբարո աղջիկներ: Սակայն աղջիկների փոխարեն շոգեբաղնիք են խուժում Սերգեյ Անանեւսկին (Կուլտիկ), Սերգեյ Վոլոդինը (Դրակոն), Յուրի Տուտիլեւը (Մյասնոյ) ու եւս տասը հոգի: Նրանք արագ հաշվեհարդար են տեսնում Լիանոզովյան հանցախմբի անդամների հետ, Բաչուրինին դաժան կտտանքների են ենթարկում, ապա խեղդամահ անում:



1996 թ. Անդրեյ Պիլեւը որոշում է ընտանիքի հետ վտարանդվել նախ Հունաստան, ապա Իսպանիա, սակայն շարունակում էր վերահսկել հանցախմբի գործունեությունը: Հանցախմբի ֆինանսիստ Սանիչը, զգալով, որ իրավապահ մարմինները սկսել են հետաքրքրվել իրենով, իսկ Մոսկվայի Օդինցովյան շրջանի նշանավոր քննիչ եւ դասախոս Յուրի Կերեզը հետաքննում է Օրեխովյան եւ Մեդվեդեւկյան հանցախմբերի գործունեությունը, շտապում է իր թիկնապահ-մարդասպան Սերգեյ Մախալինի (Լիսի) հետ փախչել Օդեսա: Սակայն իրավապահ մարմինները օպերատիվ-հետախուզական տվյալները իրացնելով՝ կարողանում են ձերբակալել Սանիչին եւ նրա թիկնապահին: 2005 թ. Սանիչին դատապարտեցին 24 տարվա, իսկ 2007 թ. սեպտեմբերին, երբ հայտնի դարձավ, որ նա անձամբ հաշվեհարդար է տեսել քսան հոգու հետ՝ ցմահ բանտարկության:

Իրեն արդարացնելու համար Սանիչը դատարանում հայտարարեց. «Այո՛, նրանք մեռած են, իսկ դուք կարծում եք, որ նրանք խաղահրապարակի երեխանե՞ր էին: Նրանք ավազակներ էին, եւ նրանց սպանել են նույնպիսի ավազակներ»:

Շուտով հասավ նաեւ Անդրեյի հերթը: 2003 թ. նրան կալանավորեցին իսպանացի իրավապահները: Միայն մի պայմանով համաձայնեցին արտահանձնել Կառլիկին՝ եթե նրան ցմահ չդատապարտեն: Դատավարությանը Անդրեյ Պիլեւը ցանկանում էր իրեն ներկայացնել որպես «դաժան» վարչակազմի զոհ՝ օգտագործելով «հոգեբանի» իր կարողությունները: Դատավարության ընթացքում ապացուցվեց, այսպես կոչված՝ «այլախոհի» իրականացրած 12 սպանությունները, մահափորձերը, ինչի համար նա դատապարտվեց 25 տարվա բանտարկության:

# Անկանխատեսելի կանայք



Ինդոնեզիայի Արեւելյան Ճավա նահանգում կինը ողջակիզեց ամուսնուն, որը մերժել էր հայտնել իր բջջային հեռախոսի գաղտնաբառը: Դեդի Պուրնամը տան տանիքը նորոգելիս կնոջը մերժում է հայտնել գաղտնաբառը, ինչի պատճառով ամուսինները սկսում են վիճել: Տղամարդն իջնում է տանիքից եւ խփում կնոջը, ինչից գազազած կողակիցը ոչ միայն հակադարձում է, այլեւ բենզինով լի տարան դատարկելով նրա վրա՝ հրկիզում է: Պուրնամին հասցնում են հիվանդանոց, սակայն նա մահանում է այրվածքներից: Կնոջը ձերբակալում են:

Իսկ մի բրիտանուհի ամուսնու ընկերոջ օգնությամբ, որը նաեւ տիկնոջ սիրեկանն էր, մի քանի անհաջող գործողություններ էր արել կողակցին սպանելու համար: Մահափորձերից հետո ողջ մնացած ամուսինը հայտարարել է, որ շարունակում է սիրել կնոջը...

Պատրաստեց **Ռուբեն ՍԱՀԱԿՅԱՆԸ**

# Կացինը՝ եղբոր ձեռքին



2018 թ. մայիսի 9-ին Երեւանի Ամառանոցային 1-ին տարածքի այգիներից մեկում տղամարդու կացնահարված դիակ հայտնաբերվեց: Պարզվեց, որ նույն օրը Աշոտ Ա.-ն հայհոյել էր եղբորը՝ Արամ Ա.-ին ու նրա ընտանիքի անդամներին: Արամը վրդովվել, այգետնակից վերցրել էր կացինը ու բազմաթիվ հարվածներ հասցնելով՝ սպանել էր եղբորը:

Սպանությունից հետո Արամ Ա.-ն գնացել էր Հյուսիսային պողոտա եւ այնտեղ ծառայություն իրականացնող ՃՈ ծառայողներին հայտնել, թե ինքը սպանություն է կատարել: Մոտեցել էին ՊՊԾ գնդի՝ այդ վայրում ծառայություն կատարող ոստիկաններն ու Արամ Ա.-ին բերման ենթարկել ոստիկանության բաժին:

Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել էր հանցագործության գործիք կացինը:

Ըստ դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացության՝ տուժող Աշոտ Ա.-ի մահը վրա էր հասել գլխուղեղի կենսական կարեւոր ֆունկցիաների սուր խանգարումից, որը պայմանավորված էր գլխի բազմաթիվ վնասվածքներով: Բոլոր վնասվածքները պատճառվել էին տուժողի կենդանության օրոք: Եղբոր յուրաքանչյուր հարվածը Աշոտը զգացել ու տառապել էր...

Արամ Ա.-ին մեղադրանք էր առաջադրվել դիտավորյալ սպանության համար: Խափանման միջոց էր ընտրվել կալանավորումը: Արամ Ա.-ն տեղափոխվել էր հոգեբուժական կլինիկա՝ դատահոգեբուժական ստացիոնար փորձաքննության: Ըստ փորձաքննության եզրակացության՝ նա տառապում է «շիզոֆրենիա. պարանոիդ ձեւ, դեֆեկտային վիճակ» հոգեկան հիվանդությամբ: Արարքը կատարելու պահին գտնվել էր հոգեկան հիվանդագին խանգարման վիճակում, արարքը կատարել էր ցնորազառանցական ապրումների ազդեցության տակ, չէր գիտակցել գործողությունների վտանգավորությունը, չէր կառավարել դրանք:

Արամ Ա.-ն ճանաչվել էր անմեղսունակ: Արձանագրվել էր, որ նա վտանգավոր է ինչպես իր, այնպես էլ շրջապատի համար: Նրա նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացվել էր, որպես անվտանգության միջոց կիրառվել էր հատուկ հսկողության հոգեբուժական կլինիկայում տեղավորելը:

Արամ Ա.-ն հոգեկան առողջության կենտրոնում հաշվառված է եղել 2004 թվականից: Ստացիոնար բուժում ստացել է հոգեբուժական կլինիկաներում, սակայն հետեւողականորեն չի բուժվել, վերջին անգամ դեղեր ստացել էր 2016 թ. հուլիսին:

Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը որոշեց անմեղսունակության վիճակում եղբորը սպանած Արամ Ա.-ին ազատել քրեական պատասխանատվությունից: Նրա նկատմամբ նշանակվեց հարկադիր բուժում՝ հատուկ հսկողության հոգեբուժական բաժանմունքի պայմաններում:

Գոհար ՔԱԼԱՃՅԱՆ

# Հետախուզվում էր խարդախության համար

Սկիզբը՝ էջ 1



Մարիամ Զաքարյանն ու Սոնա Պողոսյանը ծանոթացան քրեակատարողական հիմնարկի սպասարահում: Տեսակցության էին եկել. Մարիամը՝ ամուսնուն, Սոնան՝ որդուն: Ու մինչ հարազատներին հանդիպելու թույլտվությունը կլիներ՝ զրույցի բռնվեցին: Մարիամն իմացավ, որ Սոնայի որդին պատիժ է կրում մարմնական ծանր վնասվածք պատճառելու համար, պատժաժամկետն էլ չորս տարի է: Հրաժեշտ տալիս հեռախոսահամար փոխանակեցին: Իսկ մի քանի օրից Մարիամը զանգեց Սոնային եւ ասաց, որ կարող է նրա որդու վաղաժամկետ ազատման հարցը լուծել. եթե Սոնան ցանկանում է, կարող են հանդիպել եւ «առարկայական» զրուցել:

«Առարկայական» զրույցը կայացավ Մարիամի տանը՝ սուրճի սեղանի շուրջ, մտերմիկ մթնոլորտում: Մարիամն ասաց, որ հիսուն դատապարտյալի պետք է ներում շնորհվի, եւ իր ծանոթի միջոցով Սոնայի որդուն այդ ցուցակում ընդգրկելու համար հինգ հարյուր դոլար պահանջեց: Պայմանավորվեցին, որ Սոնան գյուղ՝ տուն վերադառնալուն պես աղջկա միջոցով փողը հասցնի Մարիամին:

«Առարկայական զրույցն» այդքանով չավարտվեց: Որպես երաշխիք Սոնան պետք է քսան հազար դրամ տար, որ վստահաբար սկսեին գործընթացը: Սոնան տվեց քսան հազարը, իսկ Մարիամը վերստին հիշեցրեց՝ շտապ ուղարկել հինգ հարյուր դոլարն ու որդու վերաբերյալ հարեւանների կողմից բնութագիր:

Հաջորդ օրը Մարիամը ստացավ հինգ հարյուր դոլարը:

Իսկ մի քանի օրից Մարիամն անձամբ գնաց Սոնայենց գյուղ: Պահանջեց նրա որդու եւ դստեր անձնագրերը, ամուսնու մահվան վկայականը, որդու դատավճիռը եւ... երկու հարյուր դոլար: Փողն իբր շտապ պետք է ներկայացներ ներման հարցերով զբաղվող վարչություն:

Ինչո՞ւ էր Մարիամն այդչափ հոգատար, այդչափ պատրաստակամ. Սոնան ոչ մի անգամ իրեն նման հարց չտվեց: Մինչդեռ Մարիամ Զաքարյանի հոգատարություն-պատրաստակամությունն առերեւույթ էր. ուրիշի նեղ վիճակից օգուտ քաղելու առիթն էր ուզում ձեռքից բաց չթողնել:

Մարիամ Զաքարյանը երկու շաբաթ անց կրկին անդրադարձավ Սոնային: Զանգեց նրա աղջկան՝ եւ ասաց, որ եղբոր գործով տուժողը, իմանալով վաղաժամկետ ազատման մասին, բողոքում է՝ պահանջելով երեք հարյուր դոլար՝ վնասված հագուստի, հիվանդանոցային եւ այլ ծախսերի համար: Նաեւ զգուշացրեց, որ անհրաժեշտ է ամեն ինչ անել, որ հանկարծ տուժողը չբողոքի. այդ դեպքում իր արած հսկայական աշխատանքը պարզապես ջուրը կլցվի:

Սոնան փողը քրոջից պարտքով վերցրեց եւ շտապեց Մարիամի տուն: Մարիամը փողը վերցրեց՝ հուսադրելով, որ ամեն ինչ լավ կլինի, ուր որ է հարցը կլուծվի:

Երկու-երեք օր անց զանգեց, թե՝ շատ շտապ պետք է ինչ-որ փաստաթուղթ ստորագրել: Չմոռացավ նաեւ բուն նպատակը՝ այդ փաստաթղթի համար հարյուր դոլար են ուզում: Մի քանի ժամից Սոնան Մարիամի տանն էր. հարյուր դոլար տվեց եւ «կարեւոր» փաստաթուղթը ստորագրեց: Մարիամը խոստացավ գործն այդքանով գլուխ բերել:

Օրերն ամիսներ էին դառնում, իսկ Սոնայի մտքով այդպես էլ չէր անցնում, որ Մարիամն ընդամենը խարդախ է: Ու քանի որ այդչափ միամիտ էր, ուրեմն Մարիամը շարունակելու էր խաբել նրան:

Հունվարի վերջերին Մարիամը ճանապարհ ընկավ Սոնայենց գյուղ: «Մտահոգ» էր. Սոնայի անկարգ տղան քրեակատարողական հիմնարկում խախտումներ էր թույլ տվել: Բայց ելք կար. երկու հարյուր դոլարով կարելի էր խնդիրը կարգավորել:

Մարիամի փողային պահանջները դադարեցին ընդամենը տասը օրով: Տասը օրից զանգեց Սոնային ու երկու հարյուր հիսուն դոլար եւ քսանվեց հազար դրամ պահանջեց: Ասաց, որ գործն արդեն վերջին փուլում է. մի քանի օրից որդին տանը կլինի: Այդ պահանջն էլ բավարարվեց:

Սոնան սրտատրոփ սպասում էր որդու տունդարձին, բայց փետրվարի կեսերին Մարիամը զանգեց եւ ասաց, որ որդու անձնագրում կնիքի փոփոխություն պետք է կատարել, որպեսզի կալանավայրից դուրս գալուց հետո կարողանա անարգել հեռանալ երկրից: Երեք հարյուր դոլար պահանջեց՝ դատվածության «դրոշմը» վերացնելու համար: Սոնան զանգեց Ռուսաստան մեկնած քրոջը՝ Անուշին, եւ ներկայացրեց նոր «պրոբլեմը»: Հաջորդ օրն Անուշը փողն ուղարկեց, որն անմիջապես հանձնվեց Մարիամին:

Դրանից հետո Մարիամն չերեւաց Սոնայի կյանքում: Վարձակալած բնակարանը հանձնեց տիրոջն ու մեկնեց Մոսկվայի մարզ՝ դստեր մոտ:

Սոնա Պողոսյանը վերջապես հասկանալով, որ քրեակատարողական հիմնարկից որդուն ազատելու ուղղությամբ ոչինչ չի արվել, որ ինքը «ավերակներին է հանձնել «դժվար» փողերը», դիմեց ոստիկանություն:

*Ապրիլի 30-ին, ժամը 19.30-ի սահմաններում, «Ձինանոց-2019» համալիր կանխարգելիչ միջոցառման շրջանակներում ոստիկանության Մալաթիայի բաժնի ծառայողները, ստացված օպերատիվ տեղեկություններն իրացնելով, Լենինգրադյան փողոցում հայտնաբերել եւ բաժին բերման են ենթարկել Օհանովի փողոցի բնակիչ, 1982 թ. ծնված Սամվել Պ-ին, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:*

Հանցանքի համար քրեական պատասխանատվության ենթարկվելու անխուսափելիությունը ուշացել էր վեց տարով...

Համիկ ՊՈՂՈՍՅԱՆ

# Գողություն հիվանդանոցից



*Վանաձորի հիվանդանոցներից մեկում գողություն էր կատարվել: Տուժողը, որ բժշկական կենտրոնում ստացիոնար բուժում էր ստանում, իրավապահներին չէր դիմել: Ոստիկանության Բազումի բաժնի ծառայողներն իրենք էին պարզել եղելությունը, հայտնաբերել կասկածյալին ու բերման ենթարկել:*

*Գողություն կատարած անձը Վանաձորի Չուխաջյան փողոցի բնակիչ Կարեն Ղարդյանն էր: Ապրիլի 9-ին, օպերատիվ տեղեկություններն իրացնելով, քրեական հետախույզները Նիզամու փողոցից նրան բերման ենթարկեցին ոստիկանության Բազումի բաժին, որտեղ նա խոստովանական բացատրություն տվեց:*

*Ապրիլի 8-ի երեկոյան, օգտվելով հիվանդասենյակի դուռը բաց լինելու հանգամանքից, դյուրակիր համակարգիչ էր գողացել:*

*Ոստիկանները ճշտեցին տուժողի ինքնությունը: Նրանից ընդունվեց հաղորդում:*

*Գողոնը հայտնաբերվել է: Նախապատրաստվում են նյութեր:*

Գոռ ՎԱՆՅԱՆ

# Բնակարանային գողությունը բացահայտվեց



Ապրիլի 10-ի առավոտյան Արաբկիր վարչական տարածքում բնակարանային գողություն էր կատարվել: Անտառային փողոցի շենքերից մեկում տանտերն առանց բնակարանի դուռը կողպելու քնել էր: Գողն էլ առիթը բաց չէր թողել: Մտել էր տուն, խոհանոցում տանտիրուհու դրամապանակից հափշտակել էր 100 հազար դրամ, ննջասենյակից՝ ոսկյա զարդեր ու հեռացել:

Կատարվածի վերաբերյալ օպերատիվ կառավարման կենտրոնից ոստիկանության Արաբկիրի բաժնում գողության վերաբերյալ ահազանգ ստացվեց:

Հետաքննություն իրականացնող մարմինը գողությունը կատարած անձին եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկեց օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Բացահայտման աշխատանքերին միացան նաեւ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախույզները, որոնց ստացած տեղեկությունների համաձայն՝ բնակարանային գողությունը հնարավոր է կատարած լիներ Արտաշատի բնակիչ Գեղամ Մելքոնյանը:

Ապրիլի 11-ին ոստիկանության Արաբկիրի եւ Արտաշատի բաժինների ծառայողները Արտաշատի Աճառյան փողոցից Գեղամ Մելքոնյանին բերման ենթարկեցին:

Հետագա միջոցառումներով պարզվել է, որ Մելքոնյանը նույն օրը հիշյալ շենքի եւս երկու բնակարանից փորձել է գողություն անել, սակայն գործն ավարտին հասցնել չի կարողացել:

Հարուցվել է քրեական գործ:

Գեղամ Մելքոնյանը կալանավորված է:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Կասեցված վարույթը վերսկսվել է



2012 թ. փետրվարի 1-ին Հովսեփյանների ընտանիքի հայրը աշխատանքից այդպես էլ չվերադարձավ տուն: 62-ամյա Մուշեղը տաքսու վարորդ էր: Հաճախ էր ուշանում, երբեմն լուսադեմին էր գալիս, բայց այս անգամ անսովոր անհանգստություն ունեին տնեցիները. նրա հեռախոսը չէր պատասխանում: Առավոտյան անհանգստությունը տագնապ դարձավ: Տաքսի ծառայության գրասենյակից, որտեղ աշխատում էր, տեղեկացան, որ նա նախորդ օրը աշխատանքի դուրս չի եկել. մեքենան անսարք է եղել: Դիմեցին ոստիկանություն:

Իսկ երեկոյան Շահումյանի գերեզմանատանը հայտնաբերվեց նրա դիակը՝ բռնության հետքերով: Հարուցվեց քրեական գործ՝ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: Մուշեղ Հովսեփյանին սպանել էին:

Դիահերձման ժամանակ Մուշեղ Հովսեփյանի մարմնին հայտնաբերվեցին ծակած-կտրած երկու տասնյակից ավելի վերքեր: Հանցագործն իր զոհին դանակահարել էր որտեղ պատահեր՝ կրծքավանդակ, թիկունք, գոտկատեղ, բազուկ...

Հանցագործությունից օրեր անց քրեական հետախույզներն արդեն ունեին հնարավոր կասկածյալների որոշակի շրջանակ, որոնցից յուրաքանչյուրի մեղավորությունը հիմնավորելու ուղղությամբ մանրակրկիտ աշխատանք էր իրականացվում:

Փորձագիտական եզրակացությամբ պարզվեց, որ Հովսեփյանը սպանվելուց առաջ ալկոհոլ էր օգտագործել:

Փորձագիտական եզրակացությունների արդյունքները, ինչպես եւ նախաքննության մարմնի կողմից այդ փուլում ձեռք բերված որոշակի նյութերն, իհարկե, հնարավորություն էին տալիս տրամաբանորեն ու փաստարկված առաջ տանել բացահայտման աշխատանքները, սակայն արդյունքի հասնել չէր հաջողվում: Այս գործով հարցաքննվեց հինգ տասնյակից ավելի մարդ: Կասկածները, առաջ քաշվող վարկածները կա՛մ չէին հաստատվում, կա՛մ տանում էին փակուղի:

Մարտի 23-ին ոստիկանության օպերատիվ-կառավարման կենտրոն ահազանգ ստացվեց, որ մարմնական վնասվածքներով հիվանդանոց է տեղափոխվել 44-ամյա մի տղամարդ: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումներով պարզվեց, որ տղամարդուն դանակահարել էր մայրաքաղաքի բնակիչ Կարեն Սմբատյանը: Նստել էր տուժողի վարած տաքսին եւ պատվիրել գնալ Արմավիրի մարզի գյուղերից մեկը: Ճանապարհին վարորդի եւ ուղեւորի միջեւ վեճ էր սկսվել, որի ընթացքում էլ ուղեւորը դանակահարել էր վարորդին:

Կարեն Սմբատյանին հայտնաբերելու ուղղությամբ որոնողական աշխատանքներ էին կատարվում, երբ քրեական հետախույզներն արձանագրեցին, որ նրա անուն-ազգանունը գրանցված է սպանված տաքսիստի՝ Մուշեղ Հովսեփյանի հեռախոսի մեջ: Պարզվեց նաեւ, որ նրանք հաճախ էին միասին «մի կտոր հաց» ուտում:

Կարեն Սմբատյանին հայտնաբերել չհաջողվեց: Օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումներով հիմնավորվեց նաեւ նրա առնչությունը օրեր առաջ կատարված սպանության հետ, բայց նա հասցրել էր հեռանալ երկրից: Նրան հայտնաբերելու ուղղությամբ հայտարարվեց միջազգային հետախուզում:

Եվ, ահա, դեպքից յոթ տարի անց ռուս գործընկերների հետ սերտ համագործակցության արդյունքում Կարեն Սմբատյանը հայտնաբերվեց ՌԴ Օմսկի մարզում եւ ոստիկանության ՔՀԳՎ օպերատիվ խմբի ուղեկցությամբ տեղափոխվեց Հայաստան:

Հանցագործությունները կատարած անձի գտնվելու վայրն անհայտ լինելու հիմքով կասեցված քրեական գործի վարույթը վերսկսվել է:

**Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

# Բարեկամի նենգությունը



հաջորդ օրն արդեն ոստիկանների տեսադաշտում հայտնվեց կասկածյալն ու բերման ենթարկվեց ոստիկանություն: Արտավազդ Բարսեղյանն էր: Քսանվեցամյա երիտասարդը ոչ միայն տուժողի հարեւանն էր, այլեւ ազգականը:

Բարեկամի տնից գողանալու միտքը վաղո՞ւց էր տանջում Արտավազդին: Համենայնդեպս, երբ երեկոյան նկատեց, որ նրանք տան դուռը փակեցին ու ինչ-որ տեղ գնացին, գողությունը դարձավ նպատակ:

Պարսպի վրայով մտավ հարեւան բարեկամի տան բակը, այնտեղ գտնվող սանդուղքը հենեց պատուհանին ու մտավ ննջասենյակ: Զարդերի թաքստոցի տեղը մոտավորապես կռահում էր: Միանգամից ներքնակի տակ նայեց ու... գտավ:

Հստակ գիտեր անելիքը՝ լույսը բացվելուն պես մեկնելու էր մայրաքաղաք ու գողոնն իրացնելու գործով էր զբաղվելու: Բայց շաբաթն ուրբաթից շուտ եկավ, ու ծրագրերը խափանվեցին:

Տնից ընդամենը մի քանի ժամով բացակայեցին: Վերադառնալուց հետո հասկացան, որ «հյուր» են ունեցել: Իսկ պատճառված վնասը ծանրակշիռ էր՝ տասնհինգ հազար դոլար արժողությամբ ոսկյա զարդեր:

Դեպքը կատարվել է ապրիլի 4-ին՝ Տավուշի մարզի գյուղերից մեկում:

Գողության մասին ահազանգ ստանալուն պես ոստիկանները մեկնեցին դեպքի վայր: Տան ու տարածքի զննությամբ պարզ դարձավ, որ գողը տուն էր մտել ննջասենյակի բաց պատուհանից: Ակնհայտ էր նաեւ, որ նա ծանոթ էր տանտերերի կենցաղին, ելումուտին: Դա էր նաեւ պատճառը, որ կարողացել էր «օգտագործել» նրանց կարճատեւ բացակայությունը:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում

Գողության փաստով քրեական գործ է հարուցվել:

**Հ. Պ.**

# Գրավադրողը՝ սնանկ



Ողջ աշխարհում է տարածված գույքի գրավադրմամբ վարկավորման բանկային գործարքը: Բանկերն, անշուշտ, իրենց ապահովագրում են ռիսկերից՝ վարկառուի հնարավոր անվճարունակության դեպքում տրամադրած վարկային գումարի կորուստ չունենալու համար: Սակայն, պարզվում է, կան անկանխատեսելի այլ ռիսկեր եւս, երբ անբարեխիղճ վարկառուն անբարեխիղճ է լինում նաեւ գրավադրված գույքի պահպանության հարցում, ինչպես պատահեց բանկերից մեկի հետ:

Բանկը դեռեւս 2014 թ. սեպտեմբերին տրանսպորտային փոխադրամիջոցի առուվաճառքի եւ գրավադրման պայմանագիր էր կնքել երեւանաբնակ տղամարդու հետ՝ նրան համապատասխան վարկ տրամադրելով «Կիա Ռիո» մակնիշի ավտոմեքենան սեփականության իրավունքով ձեռք բերելու համար: Տղամարդուն ժամանակացույցի թերթ էր տրվել, որի համաձայն նա պետք է սահմանված օրերին վարկի մարման վճարումներ կատարեր: Տղամարդը վճարումները կատարել էր մինչեւ 2017 թ.: Բանկը քանիցս հիշեցումզգուշացումների ծանուցումներ ուղարկելուց հետո դիմել էր դատարան:

Այս ամբողջ գործընթացը, իհարկե, որոշակի ժամանակամիջոց է տեւել, որի ընթացքում պարզվել է, որ տղամարդը 2017 թ. նոյեմբերի 1-ին ընդհանուր իրավասության դատարանի վճռով սնանկ էր ճանաչվել, իսկ բանկը սնանկացման գործում գրանցվել էր որպես գրավով ապահովված պարտատեր: Գրանցվելը գրանցվել էր, բայց իրականում զրկվել էր իր պարտքի վերադարձն ապահովող գրավադրված գույքից. սնանկության վարույթի շրջանակում սնանկության կառավարչի ու դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցները գրավի առարկա հանդիսացող ավտոմեքենան չէին հայտնաբերել:

Կարելի է պատկերացնել, թե բանկի համար սա ինչ անախորժ պատմություն էր, ու բնական էր, որ բանկի տնօրենն այդ մասին հայտնի դառնալուց հետո դիմել էր ոստիկանություն:

Հարուցվել է քրեական գործ:

**Ռիտա ՆԱՀԱՊԵՏՅԱՆ**

# «Հափշտակություն»



Ապրիլի 7-ին տաքսու մի վարորդ ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում տվեց, որ փախցրել են իր «Օպել» մակնիշի մեքենան: Դեպքը տեղի էր ունեցել ապրիլի 6-ի երեկոյան՝ ոստիկանության բաժնի մոտակայքում:

Ոստիկանության Նոր Նորքի բաժնի ծառայողները կարճ ժամանակում պարզեցին դեպքի բոլոր հանգամանքները:

Տաքսու վարորդը պատվերը ստացել էր Մալաթիա-Սեբաստիա թաղամասում: Ուղեւորը խնդրել էր գնալ Նորք: Երբ հասել էին հեռուստաաշտարակի մոտ, պատվիրել էր փոխել ուղղությունն ու գնալ ոստիկանության Նոր Նորքի բաժին, քանի որ, ըստ նրա, այնտեղ էր աշխատում կինը:

Երբ հասել էին ոստիկանության բաժնի մոտ, մեքենային էր մոտեցել մեկ այլ տղամարդ, ներկայացել ոստիկանության օպերլիազոր, հայտնել, որ մեքենայի հետ կապված խնդիր կա, եւ այն պետք է մնա ոստիկանության բաժնի ավտոկայանատեղիում՝ ստուգումների համար:

Մեքենայատիրոջը խնդրել էին իջնել եւ սպասել բաժնի մոտ: Որոշ ժամանակ սպասելուց հետո տերը նկատել էր, որ մեքենան չկա:

Հաղորդումը ստանալուց ժամեր անց, հանցագործությունը կատարելու կասկածանքով, փախցրած «Օպել»-ով հանդերձ, Մոլդովական փողոցից ոստիկանության Նոր Նորքի բաժին բերման ենթարկվեցին 31 եւ 32-ամյա քաղաքացիներ, որոնք խոստովանական բացատրություն տվեցին:

Կատարվում է քննություն:

**Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ**

# Բացահայտում են Վանաձորի ոստիկանները



Ապրիլի 12-ին ոսփիկանության Տարոնի բաժնում հանցագործության վերաբերյալ հաղորդում սփացվեց: Վանաձորի բնակիչներից մեկը հայփնում էր, որ փեսել է, թե ինչպես մի փղամարդ մփել է ազգականի փուն ու փորձել գողություն անել:

Դեպքի առթիվ Լոռու մարզային քննչական վարչությունում քրեական գործ հարուցվեց: Ոսփիկանության ծառայողները սկսվեցին հեփախուզական միջոցառումներ ձեռնարկել՝ արդյունքում պարզելով հանցագործությունը կափարելու մեջ կասկածվող անձի ինքնությունը:

Ըսփ սփացված փեղեկություններ՝ Վանաձորի Գրիգոր Լուսավորչի փողոցի փներից մեկից փորձել էր գողության անել Էջմիածին քաղաքի բնակիչ Վարդան Խուդոյանը: Քրեական հեփախույզները նրան հայփնաբերեցին Վանաձորի Խորենացու փողոցում եւ կասկածանքով բերման ենթարկեցին ոսփիկանության Տարոնի բաժին, ապա ներկայացրին դեպքի նախաքննությունը վարող մարմնին:

Հեփագա միջոցառումներով իրավապահները պարզել են, որ նա օրեր առաջ դարձյալ նույն բնակարանից գողություն է արել, իսկ մարփին կենցաղային փարբեր իրեր է գողացել Վանաձորի Բաղրամյան փողոցի մի փնից:

Վարդան Խուդոյանը կալանավորվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

**Մարփուն ՍԻՄՈՆՅԱՆ**

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:




# Ուշադրություն

## Հարգելի քաղաքացինե՛ր

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

# Աստղագուշակ

03.05 - 09.05



**Խոյ** - Շատ խնդիրներ կհարթվեն, շրջապատի հետ փոխըմբռման կհասնեք:

**Ցուլ** - Ավելի զգոն եղեք. ձեր անկեղծությունն ու միամտությունը կարող են հենց ձեզ վնասել:

**Երկվորյակ** - Որքան անշահախնդիր օգնություն ցուցաբերեք մտերիմներին, այնքան դրական փոփոխություններ կլինեն ձեր կյանքում:

**Խեցգետին** - Քիչ է մնացել, որ հասնեք ձեր ցանկալի արդյունքին. ուշադրությունը մի շեղեք եւ զբաղվեք գլխավոր գործով:

**Առյուծ** - Ձեր պահանջկոտությունը կարող են փչացնել փոխհարաբերությունները շրջապատի հետ:

**Կույս** - Պետք չէ մարդկանց շոկի մեջ գցել ձեր ուղղախոսությամբ եւ կտրուկ վերաբերմունքով:

**Կշեռք** - Ձեր անհաջողությունների պատճառ կարող է դառնալ այն, որ ավելորդ անգամ վստահեք անծանոթներին:

**Կարիճ** - Ժամանակն է ներքին լարվածությունից ազատվելու: Հնարավոր են գործնական առաջարկներ:

**Աղեղնավոր** - Շատ ոլորտներում փոփոխություններ են սպասում: Պետք չէ այրել բոլոր կամուրջները եւ հրաժարվել նախկին ձեռքբերումներից:

**Այծեղջյուր** - Ստեղծագործական աշխատանքը մեծ հաճույք եւ եկամուտի նոր աղբյուր կպարգեւի: Հեղինակությունը կտրուկ կբարձրանա:

**Ջրհոս** - Կարիերայում հնարավորությունները կշատանան, բայց ստիպված կլինեք մեծ պատասխանատվություն վերցնել ձեզ վրա:

**Ձուկ** - Միայն թե չափից շատ մի ծանրաբեռնվեք եւ աշխատանքի ողջ բեռը մի վերցրեք ձեր վրա:

# Փորձեք լուծել

**Խնդիր N1**



**Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից**

**Խնդիր N2**



**Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից**

**Նախորդ խնդիրների պատասխանները**

Խնդիր N1 1.c7-d8 a5:c7 2.d8:d8 x

Խնդիր N2 1.f6-e7 f8:d6 2. b4-c5 d6:b4 3.a5:e1 x

Պատրաստեց
**Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ**
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

# Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 25.04.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: